Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Հաբաթ, Յունուարի 17—ին. Թիֆլիս. №3.

ՓՈԽՈՐԻԿԸ ԱՆՑՆՈՒՄ Է.




Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

—Սօլդան, սրանք լաւ աղջկանք են, իմ աչքիս լոյս պէս պահել պահպանել եմ, խաթրդ որ չունենամ, իսկի էդ գնով էլ չէի ծախի. Միրուքս վկայ որ ճիշտ եմ ասում, մի տես, բերնիդ ջուրը կերթայ.

საქართველოს პარლამენტის ეროვნული ბიბლიოთეკა

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները կամ բաժանորդագրութիւն նորոգողները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է երբ փակ չէ, իսկ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ փակ է գիշերները.
ԱԳԱՀԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Մեր հասցէն՝ Тифлисъ редакція „Хатабала“
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԳՏՆՒՈՒՄ Է

Դվօրցօվայա փողոց, Վիկտորիա հիւրանոցի գաւթում.

Կ. ՊՈԼՍՈՒՄ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» հատավաճառը յանձնւած է գրավաճառ-հրատարակիչ՝ պարոն ՅՈՎՀԱՆԷՍ ԳԸԼԸՃԵԱՆԻՆ, որի գրախանութը գտնւում է՝

ՁԱԳՄԱՃԸԼԱՐ ԹԻՒ № 25

Նոյն տեղ կարելի է և բաժանորդագրւել։

## ՓՔՐԻՐ ԷՐԱԾ ՍՐՏԻՑ

... Նա գնաց, գնաց ու էլ յետ չի գալու էն օրերը, էն նամուսը ինչ վուր հնումը ունէինք մինք։

Նա գնաց, գնաց ու գժար թէ էլ տեհնինք էն ազիզ ախպէրութինը, հալալ ընկերութինը, խասակ նամուսը, վուր հնումը մինք ունէինք, վուր հնումը մինք պատւում էինք, վունց վուր պաշտում պատարքը։

Վա՜յ ամ էր իմացի էս բիարբութինը, էս թասուր թասուր օյինները, էս չիշուղ չեշուղ փոկուզները, վուր մինք հիմի տեհնում ինք։

Ազար, ցուրթ է, խալխը էն թասուր ուսում առած չէր, էս հիմիկւայ հանցի ըշտօ փիշտօ չէր գիդի, համա ինչ կօսիք վուր նամուսն ու արուոը շատ էր էն չախը։

Առաչ մինք փիքր էինք անում, վուր՝ համ էսոր, երգրի էրեսին արուով ապրինք ու համ էլ էն էինք չալիշ գալի, վուր մեռնելուց յիտն էլ, թային աքթաւթէնի խարջ ըլինք, դժոխկի բաժին չլինք, հոգիքս սատանէքու փայ չանինք։

Հիմի, հիմի կի, աքթաւթէնի կի չէ, էս օրւայ համա էլ չինք փիքր անում թէ՝ էս ինչ օյիններ ինք անում, էս ինչ փոկուզներ ինք խաղում։

Ի՞նչ գուզիք ասիք, համա իս չիմ ասայ, թէ ուսումնականութինը աննամուսութին է շանց տալի խալխին։

Էս ինչի համա իմ ասում։

Զուհրի հիմի թէ վուր մէ ուսումն առած օքմին մէ բան է արել, մէ լոփութին է ցուրծի, էնչախնէէթ էն ին ասում՝ վա, ուսումնական մարթ է, Ռուսէթ, Եվրոպա շատ է ման էկի, էգէրա էնդի էսսուծ է սովրի։

Մէկը թէ իր հնգոր կնիկը փախցնում է ասում ին՝ ուսումնական օքմին է, էտէնց էլ պիտի անէր։

Օքմին թէ ուշունցներ է տալի, ասում ին գազէթնէքրէմէն է սովրի։

Օքմին թէ պիանիցութին է անում, ասում ին՝ ինչ հաջաթ, գինին էնդա՞նհամար է վուր խմին։

Օքմին թէ մարթ է սպանում, միզեղ կուլի, կօսէ, թէ չէ՞ ինչի կու սպանէր։

Մարթիք ին գողնում, մարթիք ին ափշտակում ու... ու... մինք, մինք օրինաւուր ու պատւական, լուսաւորւած ու կուլտուրականացած խալխս ինչ ինք անում։

Վունչինչ։ Ի՞նչի. չունքի մինք, մարթկութէնի պատիւը չունինք, մարթ սուելու պրաւա չունինք։

Վուր իս գօվում իմ մէ գլուխ հինը, ցուրհենց գիդ իք թէ խոնուրիի լաղաթը չիմ գիդի։

Ախպէր ինչ գուզէք ասէք, համա էն լաւ լաւ բաները վուր չասիմ, նրանց գովքը չանիմ աշխարքին, չիմ կանայ սուս կենայ, վուր գիդենամ թէ էս սահաթիս էլ հոքիս կուտամ։

Ի՞նչ, կուզէք վիկալէք միր հին՝ անցած գնացածը ու նուրը՝ հիմիկւանը. գուզիք գազէթներէմէն, գուզիք թիատրներէմէն, գուզիք էպիսկոպոս-տէրտէրներէմէն, գուզիք դրուզներէմէն, գուզիք վարժապիտներէմէն, գուզիք վաճառականներէմէն, գուզիք չկօլներէմէն, գուզիք, գուզիք... վուր մէկը ասիմ, վուր մէկը թողնիմ, զանայ էսսուր հեսար ու հաշիւ կայ։

Տօ անաքանդնիր, հին ժուզւայ աւազակներն էլ ուփրօ նամուսով ու արուով էին, քանց թէ հիմիկւայ «սուկի փրզինիրը»։

Իմացած կուլիք Քօրօղլու խաբրին, գիդիմ շատերդ տեհած էլ կուլիք ղաչաղ Քարիմին, կարթացած կուլիք ղաչաղ Արսէնի ղոչաղութիւնները։

Վա՜հ, վա՜հ, վա՜հ. սատա հիմի էլ մարթու բէփը գալիս է, խի վուր միտն է գըցում, թէ էտ ղաչաղ տիղոլը, մէշէրումը ու չոլերումը ապրած, ծնած ու մնած մարթիքը ուփրօ խիղճ ու արուո ին ունեցի, քան թէ հիմիկւայ միր ցիլինդրաւուր, գալոստուկաւուր, նեղ շալվարաւուր. աղեկալոն ու զուխի ածող, ձեռներէմէն փիլչատկին չհանող, օխշրի միս չուտող, կլուբնէրու ու թիատրնէրու զարթ ու վարթ սատաղկները։

Ղաչաղ Արսէնը, Քարիմը, Քօրօղլին ղաչաղութին վուր անում էին, էնդի կլ փիքր կէր, արուոի ու նամուսի համա էին փիքր անում, հարըստից խլում էին, ախքատին տալի, ախղ ննգած տիղը քէսիրին օսկում էինք, խիղճին ձիոյը բռնում։

Ու խալխն էլ սիրում էր նրանց, նրանց գովքն էր իրքում, նրանց էշխով տարւում։

Հիմի, հիմիկւայ աւազակները, միր կլուբի ու թիատրների զարթիրը, միր ննգիր ախպրտիքը, ինչ ին ինչ։

Մարթիք ին գողնում-փուղի համարտաւչ, սիրած ախչիկ բլում էր, վուր փախցնում էին, սառում էինք էգերս սիրում է, ան ախչիկն էլ զարուլ է, շատ կուխ. զալմաղալ էին անում վիրջը մէ բանով քուԹահ անում. հայս ախչկա տէրիրին էլ փուղ էին տալի ու էլի բարեկամութին հաստատում։

Հիմի՞։

Հիմի մարթիք, սաղ սաղ մարթիք, օղլուշաղի, էրեխերանց ու ցուրծի տէր մարթիք, պատւ, անդուր, ջանից ննգած մարթկերանց ին գողանում, ու տանում, էօր էսսի, էրուց էնդի պահում, ու վիրչն էլ փուղ ին ուզում։

Ու փուղ ին ուզում, համա ինչըզզա։

Իմացիլ ին Ալին մեռել է, համա չին իմացի թէ վուրգի ին թաղի։

Փուղ ին ուզում հազար թումնիրով, կօսիս պանտա ըլի։

Ախպէր, թէ էտ փուղ համբրիլը էտէնց հիշտ է, բաս ինչի իրենք էտ մարթիքն էլ չունին։

Իրենց իրենց գողնում ին, տանում ին քախցած ծարաւ պահում... ու վիրչն էլ պահելու փուղ ին ուզում տասհազար թումնիրով։

Այ ափրակներ, ափրակներ.

Տօ մունդըրեկնիր, զանս մէ մարթ պա-

ეროვნული ბიბლიოთეკა

հիլը ամխոր ինչ ամէ։ Ճամ, շատ՝ երկու թուման, քառասունհինգ մանէթ ամենայն. մաշ վուր էն փուղի տեղ հարիր հազարնիր իք ուզում, բաս ամութ չիք քաշում։

Համա ամութ դուք ինչի պիտի քաշիք, ամութը միրն է, վուր էս ամենք անհնում ինք, էն բոլուրը յաում ու վիրչը վունչ ձէն ինք հանում, վունչ ատգրոնիկներուն տիղն ու տիղը խայտառակում։

Ամութը միրն է... համա մինք էլ մարթիք ինք, վուր շատ էլ միգ համա իմ խօսում։

Էն գղակնիրը բառ հարում չէ՞ միգ, վուր գլխներուս ինք գնում։

Օվ վուր կռսէ թէ ամութ չէ ու էն էղպէս պիտի ըլի, բաս իս ախպէր, դլուխս քարովը կտտամ ու էրէսս էլ պատռիմ։

Թէ չէ մ՛ու ախպէր, ձիդ խաբինչ իմ պարտ, էս ասիրօ յաւ չէ՞, վուր համ գլխնիրդ քարով էք տալի, համ էրէսնիրդ պատռում, ու համ էլ կապէկնիրով գալած փուղիրը ասպալնիրին։

Էս հանգի բանիր իմացիլ էի, անհոյ էլ դուք էլ անհաք. համա մէ բան չիմ կանաց իմանայ թէ, մարթս ուրիշ մարթու փիլորիր էլ կանայ գողանայ։

Էս թաւուր բանիր էլ է ըլում։

Էս մէ էրկու շափաթ կուլի գաղէթնիրում գրում ին, վուր մէ օրմին, վուր մէ անուամով գրում՝ գրող չէ էլի, աւինք էլի. ինչ վուր ունէ տալած, ուրիշինն է էլի, էլի ասինք՝ ուրիշի գրած է էլի ու վիրչը, էս միթամ գրողը գուղցիլ է ու վիրչը իփ վուր հալալ գրողը մնիլ է, իրա անունով տպիլ է տւի։

Սա վո՞նց է հա. ասում ին ախպէր, ու ձէն չին հանում։ Իս ճանցիլ իմ չէկլած, էս բանիրը ուրիշ տեղիր էլ կուլի թէ մէնակ միգ պէս օրինաւոր ու առկանէր խալխի մէչն է ըլում՞

Մաշթապանութին.
Մարթաշո-դութին.
Բանագողութին։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, էս ինչէր է ըլում, էս ինչիր իմ իմանում, ձիդ մատաղ ում սուփ կուս Աստուածածին, գանա կս ինչ միխկ իմ գուրձի, վուր էս թաւուր բանիր էլ իս իմաց տալի ինձ։

Խաս. Խալտարազով

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԱԶԱԼՈՒ ԲԱՆԵՐ

«Մշակի» Ոսկու Զօնը խօսելով Մոսկւայում կայացած վրացական երեկոյթի մասին, ի միջի այլոց գրում է՝ որ յայտնի երգիչ Կամենսկին մեծ ապագայ է խոստանում. որովհետեւ նա յաւ է երգում։

Ցաւում ենք որ պ. Ոսկէ Զօնին պէտք է կանխենք. Կամենսկին արդէն ապագան վերջացրած արտիստ է, նա ապրում է անցելով եւ ներկայով. մօտ 45 տարեկան է, ուրեմն էլ այսուհետեւ այդպիսի երգիչն ապագայ չի ունենալ։

Տեղական ռուս թերթերը չգիտենք ինչից դրդւած, համարեա կլեկեօրների դեր են կատարում երգչուհի Վան-Բրանդի համար. „Нов. Закавказ." թերթի խմբագրութիւնը in corpore հաւատացնում է, որ Անգլիական էդւարդ թագաւորը, հիացած Վան-Բրանդի գեղեցկութեամբ, երգեցողութեամբ և նազելութեամբ, ընծայել է նրան մի գեղեցիկ շնիկ, որը քնում է, յատուկ իրա համար պատրաստուած թաւշեայ անկողնում, Անգլիայից բերած մահճակալում։

Երջանիկ շուն...

Երկու տարի առաջ տեսած կայինք Վան-Բրանդին, յաւ երգչուհի էր, մեր սովորականներից, բայց կարդալով այդ կլէկեօրական բէկլամները, կարծեցինք թէ սա էլ ուրիշ Վան-Բրանդ է։

Դուրս եկաւ որ երգողը նա է, որին մենք տեսած կանք և երկու տարի առաջ, երգչուհին երգեց, դայլայլեց, նոյնիսկ ուշաթափւեց և սակայն Գատուայի խմբագրութիւնը չկարողացաւ հաւատացնել, որ նա իրենց գոված Վան-Բրանդն է և մենք միմիայն ցաւեցինք Անգլիական թագաւորի ճաշակի համար, նա երգչուհուն շան էր նւիրել երգելու համար. մենք խիղճ կատու էլ չենք նւիրի, երբ Թիֆլիզում ունենք կօլօրատուր Օսիպօվայի և դրամատիկ սօպրանօ Դրուզեակինի պէս շնորհալի երգչուհիներ, որոնք կարող են զարդ լինել նոյնիսկ մայրաքաղաքների բեմերին։

—

Տիգրան Նազարեանը, նկատելով «Գործ» թերթօնում իրա մասին ասած անտեղի տեղեկութեան համար, հրաւիրում է Թիֆլիսի միջազգային՝ մամուլի ներկայացուցիչներին, որպէս դատաւոր «Գործի» առօրական, բայց եւ անտատոր համարձակութեան առթիւ։

Որչափ դա զարգացի է «Գործի» կողմից, «Գործի», որի խմբագրութիւնը գտնւելով Թիֆլիզում, խելք տեղեկութիւն էլ չունի թէ ի՞նչ է կատարւում «Աղբիւր Տարազի» հետ, նոյնչափ էլ ստարոտի է պ. Նազարեանի վրդովմունքը։ «Գործը» մի բան էր գրել, որովհետեւ հարկաւոր էր գրել ցոյց տալու համար, որ իրենք էլ փոքրիկ գիտեն... խօ չէ կարող գործի հետ ծանօթանալ եւ այնպէս տեղեկութիւն տալ։ Դա նրա պակասկայքին եւ փոդուցին յատուկ ծեւն է. իսկ Տ. Նազարեանի յուսրատանքը խիստ ծիծաղելի է եւ գրական էտիկային հակառակ...

—

Ստացանք «Հաշիւ հանգամանակիչ մասնաժողովի՝ ի նպաստ Թուրքիոյ Հայաստանի հայ ամենալներիի»

Հաշիւները ստուգեցինք, ուզեցինք իմանալ վերև յիշւած «Գործի» տարկութիւնների պատճառները և գտանք, որ «Գործի» խմբագրութիւնը ճիշտ է ասում, ոչ բոլոր հաւաքած փողերը իրենց տեղն են գնում, այլ շատ անգամ կորչում են սրաշ մարդկանց, խմբագրութիւնների և խմբակցութիւնների որկորների մէջ, ինչպէս Հայրիկեան ֆոնդը, Տաճկահայերի համար հաւաքած նպաստները, գաղթականների գումարը արձանների փողերը, ցրւիչների գումարները և այլն և այլն։ Գալով յիշեալ մասնաժողովի հաշիւներին, վերահաս եղանք, որ առ 1-ն յունւարի ներկայ ամի, ստացւած է 10, 538 ր. 37 կ. որից միմիայն 415 ր. 76 կ. է ծնում մասնաժողովի մօտ, իսկ մնացածը ուղարկւած է Թուրքահայաստան։

—

Երկուշաբթի ամիս 12-ին, հայ դերասանական խումբը խաղաց Սենկեւիչի «Ո՞ւր երթաս» հեղինակութիւնը ի նպաստ Արշակ Ցարութիւնեանի։

Հասարակութիւնը չգիտեմ որտեղից լսելով որ՝ պ. Ցարութիւնեանը ուզում է մի որ եւէ տեղ երթալ, անապարել էր թատրոն եւ ծայրէ ի ծայր լցրել ավօրական հայկական դատարկ թատերասրահը։

Խաղը ոչինչ, յաւ էր, միայն կարող էր աւելի յաւ լինել եթէ իրօք՝ յաւ լինելու տրամադրութիւն լինէր։

Մեր հարցին պ. Ցարութիւնեանին, թէ «ո՞ւր երթաս» պատասխանեց,

—Փարիզ, փառք թատրոնի, առ ոտս Մանթաշովի։

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Հայ. կառավ. անդամները առաւօտեան առնօթի՝ հարերի տեղ, սխալմամբ «կուլ» են տալ 1906 թ. հաշւեմատեանը. տարաբախտաբար նրանց կոկորդի փոքրութեան պատճառով մատեանը ամբողջապէս կուլ չի գնացել, այլ կէսը մնացել է դրսումը։

Երեք օր է կառավ. քարտուղարը և Սիմէօն բէգը մատեանի դրսի կէսից քաշում են, բայց չեն կարողանում դուրս հանել. Վերջին անգամ ամուր քաշելուց մատեանի կէսը կտրւում է և նրանք յետ ու յետ գնալով գետնին են թաւալւում ու ուշաթափւում։

Նրանց ուշքի բերելու համար, քննիչները ամբողջ օրը հալից ընկած՝ ջուր են թափում նրանց վրայ. Տէր Գաբրիէլինը աղօթք է կարդում, իսկ Պարսեղ ապերը սուգ է պահում։

Մատեանի կտրւած կէսից երեւում է, որ փողերը և հաշիւները մնացել են անդամների «կոկորդում» մնացած մատեանի մասում, որը դուրս հանելու համար հրաւիրւած է քարքանչի։

«Գարի գցողի» առելով, անդամ հայրերը «մատենակուլական» ցաւով բռնել են։ Եթէ նախօրօք նրանց բերանը չի կնքւի «Մաթարայալի» կնիքով, կարճ ժամանակից կառ. մէջ ոչ մատեան կը մնայ և ոչ թուղթ։

Տեղիս յաջորդ Կորիւն վարդապետը արդէն 16 ամիս է որ շնորհիւ ամենապորմած նահանգապետի ապաշխարում է, բայց մեղքերից չի քաււում։

Նրան մեղադրել են, թէ ինչու հայ-թըր-

ՆԿԱՐԻՉ ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ԱՏԵԼԻԷՈՒՄ



քական ընդհարման ժամանակ չի «սպանւել» այլ կենդանի է մնացել։

Վարդապետը եթէ նախօրօք իմանար, որ «ապրելը» յանցանք է... ուրախութեամբ 16 անգամ կը սպանւէր քան թէ էս օրը ընկնէր։

Նրա ապաշխարութեան ամբողջ ժամանակ՝ անցիս «կղերատանը» մնացել է ան գլուխ։

Նոր գլխացու ընտրելու համար, արդէն 69 ժողով են արել, բայց արժանաւոր գլխացուին չճանաչելու համար, գլուխ չի եկել։ Կիրակի օրը, ժողովում, Տէր Գարեգինը պատգամաւորներին առաջարկում է ընտրել նրան, ով շատ յօդւածներ գրած լինի հայոց գաղէթներում և կը կարողանայ միաժամանակ 12 պաշտօն կատարել։

Թէև պատգամաւորները չընդունեցին նրա առաջարկութիւնը, բայց նա, աչքը չպարծնելով նրանց, երեք մէջտեղի մէջ ածած բոլոր հայ «մամուլը» (բացի «Թաթարալուսից») շալակը առած մտաւ ժողով, և բարձրացաւ կառ. քարոզչարի ամբիոն, սկսեց բարձրաձայն կարդալ վարդապետների գրած յօդւածները և այնքան երկարացրաւ, որ պատգամաւորները շատ յորանջելուց՝ քուն եղան։ Երեք ժամից յետոյ արթնանալով երբ տեսան, որ դեռ չէ վերջացրել և չը կարողանալով ոչ մի կերպ նրան լռեցնել, «բերանը կապեցին աղլուխով»։

Կարդացածից երևաց, որ ամենաշատ յօդւածներ գրել է Սիոն վարդապետը և ինքը, իսկ միաժամանակ 12 պաշտօն միայն ինքը կարող է կատարել։

Նրա առելով, մի քանի ծխականութիւններ եղած դէպքում, միաժամանակ կատարելու համար, որ ձեռքերը չի ընկնի, հին փարաջան հագցնում է գրամաֆօնին և ժամկոչի ձեռքով ուղարկում «բառ պատշաճի աղօթքներին» նստամների հետ միասին։

Ժողովը բացայայտ տեսնելով ալբանէլի քանքարաւոր ընդունակութիւնները և՛ ինք կասկի ունենալով, որ ուրիշ տեղից եկած յաջորդը, ժողովրդի վրայ նստում է տարեկան 4000 ր. որոշեց նրան ընտրել յաջորդ, այն պայմանով միայն որ՝ 1), ձեռք վերցնի կոխեներից, 2), իր պաշտօններից գոնէ քառորդը տայ այրած Ներսէսի քահանաներին, որոնք իրենց ծխականների Թալանելուց յետոյ քաղցած փողոցները չափչփում են։

Մ. Յովհ. եկեղ. Հոգաբարձ. որոշել է նոյն եկեղ. պարտականների վրայ 6 տարի դադանի մնացած (մայիսին շնորհիւ «Թաթարալուս»-ի աշխարհ ընկած) փողերը ստանալու համար գանգատ չը տալ, մինչև նրանք իրենց կալւածները և ունեցածները գրաւ դնեն, կամ ուրիշի անունով անեն։

Տփխիսի առաջնորդը հաւանելով հոգաբարձ. որոշումին, իր կողմից պարտականների գործը... աւելի հեշտացնելու համար, հրամայել է—հաշիւները նոր քննիչների ձեռքով, նորից քննել և այնքան ձգձգել, որ նրանք ունեւորից յետոյ էլ կարողանան հանգիստ մարսել։ 99 անգամ քննւած հաշիւները արևի պէս պարզ է նոյն իսկ կոյրերի համար, եթէ միայն շոշափէ թղթերը և բառախականները, որտեղ «վեր առայ և պարտամ-ի տեղ, գրւած է վեր առայ և գոհբառմար արի»...

Բռնդիրշմերուդի

## ՀԼԲԱԹ ՁԱՆԳԻՆՆԱՑ ԿԸ

Պաշտօնը եղաւ, օսկոբը հագը, մկրատը սուր, օխչարը բրթաւ, թող խուզէ ու ուտէ. հլբաթ զանգիննայ կը։

Գլէար ձեռին, փչտավը կողքին, տասը ճակաին, մանգաղը սուր, յարար հասած, չայ չաքար, պանիր, ռոմ, խալաթ... թող գզէ ու ուտէ. հլբաթ զանգիննայ կը։

Խնդիրմ գրեց 10 մ. Խնդիրը կարդաց 5 մ. Խարհուրդ առեց 5 մ. Բարեիշխաց 5 մ. Սիրիրից պայտեց 500 մ. Արդարին խուզեց, մեղաւորին խուզեց, հլբաթ զանգիննայ կը։

Կնիկ չունի, աղայ չունի, հոգի չունի, մեր հայր սուրբն է ու քաղաքի առաջնորդ է, 100 գիւղի տէր է, հոգևոր հովիւ, հոգևոր օչխարներ, թող խուզէ ու ուտէ, հլբաթ զանգիննայ կը։

Շլինքը բարակ, ջէբը ծակ, ռոճիկը կարճ, պաշտօնը խախուտ, կնիկն ալ սալթ աղջիկ բերող, ինքը վարժապետ, հլբաթ աղքատնայ կը։

Ինքը ռանչպար, ստացը շատ, հողը քիչ, կարկուտը յարար տարաւ, գողերը եզները տարան, կնիկն ալ պարկեց 9-դ. աղջիկը բերեց, հլբաթ աղքատնայ կը։

Գ. ալայջի Մարգար

***

Լուսին ինչու այդպէս դժգոյն
Դու սահում ես երկնքում
Միթէ դու էլ մեզ պէս անքուն
Թափառում ես ու տանջւում։

Չէ որ ինձ պէս դուն դժբաղդ չես,
Ոչ էլ ինձ պէս վշտացած,
Էլ ինչու ես այդպէս գունատ
Տխուր դէմքով դալկացած։

Բայց երևի դուն զգում ես
Ինչ է կեանքը դժբախտի
Դու տեսնում ես, դու լսում ես,
Լուռ վկայ ես ամենքին...։

Սուսան



## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

300 րուբլին...

Թիւրքահայերին նպաստող հանգամանքներ մանուածոգովի գանձապահ պ. Ա. Սարուխանեանը, ինչպէս կարդում ենք «Մշակի» մէջ, այս քանի օրերս ստացել է «Գործ» ի խմբագրութիւնից... 300 րուբլի...

—?!!...

Այստեղ, ակամայ յիշում ենք Համլետի խօսքերը, ուղղած իր անհաւատարիմ մօրը՝

—Դեռ չեն մաշել այն հողաթափերը, որ դու հագած էիր հօրս դագաղի յետևից գնալիս և արդէն դաւաճանեցիր նրան...

—Դեռ չէ չորացել այն մուրը, որով ապւած «Գործ» լրագիրը հրաւիրում էր առաջնորդողով հայ հասարակութեանը «և ոչ մի կոպէկ տալ նպաստի յանձնաժողովին, այդ ցինիկներին և այլն և այլն» և արդէն 300 րուբլին, իրենք իրենց ձեռքով յանձնեցին նրանց, այդ «ցինիկներին...»

Շնորհաւորում ենք և յիշում հայկական մի հին առած՝

—Անը վեր է, քանց մանր...

Հարիւր րուբլին...

Ժուռնալիստները ստացել են օպերայի արտիստներից 100 րուբլի, և չգիտեն ինչ անել՝ պահե՞լ թէ՞ վերադարձնել։

—Պահելը անպատւաբեր է.

—Վերադարձնելն անկարելի, որովհետև դժւար է ժուռնալիստների ընկերութեան գանձարանի մէջ 100 րուբլի մտնում։

Եւ ահա վիճում են։

Համոզւած եմ, որ վէճը կվերջանայ հարիւր րուբլին պահելով։

Դա է աղքատի դատաստանը, նոյն իսկ, երբ նա այնքան հպարտ է, որքան մեր ժուռնալիստները...

Գ. Տ. Նազարեան սպառնում է մի շարք մերկացումներ անել «Գործի» վերաբերմամբ, միայն նրա համար, որ «Գործը» քաջութիւն չի ունեցել խոստովանելու մի սուտ, որ նա ապագրել է «Աղբիւրի» մասին և պ. Նազարեան հրաւիրում է, որ Թիֆլիզին ներկայ լինել այդ սուտի դատին... «Գործի» հետ

Ասանց մարգարէ լինելու, կասենք, որ «Գործը» չի գայ դատարան, այլ մխիթարն կը հայհոյի... թերթի էջերից...

Կուզէք գրազ գանք,

Այդպէս չըլինելու համար՝ պէտք է «Գործ» չլինել... Փաստը խոստովանելու համար պէտք է լինել...

Իսկ «Գործը»։ Ա՜խ այդ Գործը, բայց... առանց չակերտների...

Օ-ՄԷԳԱ

## ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

—Ցեմար, աղէտ. անպատկառ, անամօթ, անզգամ...

— Բայց, պարոն, այդ ինչ փաղաքշական լեզու է. խնայեցէք իմ լսողութեանը.

— Ի՞նչ. դու չես տեսնում, որ ես ընդհատում եմ քեզ:

— Բայց քեզ ո՞վ ասաց, որ հայհոյելը քննադատել է:

— Ո՞վ. պ. Ա. Տ. Գ-ն. կարդա՛ «Փորձում» նրա «քննադատութիւնը» մի դասագրքի մասին... հայհոյելը գիտութեան առաջին աստիճանն է:

— Բայց դա ամօթ է նախ ձեզ համար.

— Ինձ, երբէք.

— Երբ ես ցանկանում եմ նոյնպիսի դասագիրք հրատարակել, պէտք է նախ այրել այժմ հրապարակում եղածը, իսկ դասագիրքը քանի որ այրել տալ չեմ կարող, գոնէ կհայհոյեմ...

## ՔԱՂԿԻ ԳՈՒՐՋԵՐԻՄԷՆ

Վուր ասում ին թէ միր քաղկի ուպրուէն խիստ զուրա ուպրուա է. օչով չէ ասում:

Մէմէ ախմախ ինձ ասում է թէ Չերքեզովը ու Խատիսովը, կօսէ, ինչ մարթիք ին, էրկու իշի գարի չին կանայ, կօսէ, փայ անի:

Համա էսուր մէչ եանղիշ ինք:

Ղուրթէ, խանդիխիան վուր փիքր իս անում, էտենց է էրևում. համա խանդիխիան էլ վուր լու իս ունգղում, խիստ մաղալու բանիր իս տեհնում:

Չիմ գիդի ախպէրս, ով վունց է, համա միր ուպրուէն կի չէ, Դումէն էլ խիստ մաղալու է ու փոկուչնիկնուբէմէն է մօղ էլած:

Ջեր էրկու տարի չէ թամամի, վուր միր պարուն Ալեքսանդրէ Խատիսովը, Աստուած հոքին լուսաւուրէ, ա՛յ մեղայ Աստու, հենց գիդայի թէ մեռած է, վրեն ուէչ իմ կարթում, վունց վուր ինքը Խատիսովն էլ խիստ սիրում է:

Խօ գիդիք սրա աղիզ խասիաթը. սա մեռլի վրեն ուէչ խօսելու համա հոքին կուտայ. մեռլին էլ դէմուդէմ սրբաութենի պապարաժնա կուտայ ձեռին:

Հա էնէի ասում. վուր ջեր էրկու տարի առա՛չ, նա միկալու ու չունքի ախկատ ու ինգուրձ խալխի համա խիստ էր փիքր անում. մէ քիչ փուղ—մէ տասնուհինգհազար թուման, տասնուհինգհազար թուման, ա՛յ, տասնուհինգ հազար թուման քաղկի փուղը ծախսից, ինգուրձներուն գուրձ ուից, քաղկի փուտաճանապարհներու, ուլուխներու, հաշիւն ու հեսաբը իմացեից:

Դա քաղկի համա խիստ օքուտ բան էր. էտ էն չախնէր, իփ վուր ամէն մէ գեաղա ու քուչի բիճօն, ինչ վուր ասում էր, էնենց էլ Խատիսովն ու ուպրուէն արանցի էին տալի:

Չունքի գրանք գիդէին թէ՝ էտ գեադեքն ու բիճօէքը խիստ մինձ մարթիք ին:

Ու էտ էն ժուգն էին անում, իփ վուր քաղկի կասում օչով ամիններով ու տարիներով մէ գրօշ փուղ չէր տանում:

Հիմի. հիմի ժամանակը փոխւել է. փառք Աստծու, էն Խատիսովը ու կամպանիէն վուր քաղկումը ութ տահթւայ բանուորական օր էր քարոզում, հիմի քաղկի ծառայուղներուն, էն ծառայուղներուն, վուր տաս, քսան տարի ծառայիլ ին, դուս ին դցում դուլուղէմէն, չունքի քաղաքը փուղ չունի, չի կանայ գրանց ջամագիրը տայ, ու համ էլ էնդուր վուր՝ «փուտաճանապարհներու» հաշիւն ու հեսաբը քաղքի ուպրուէն գիդացիլ է:

Ես խօ պառաւ մարթ իմ, շատ բան իմ տեհի, շատ փաթերակնիր է գլխովս անցկացի, համա էսթուր մարթկանց անպատուութին կի չէի իմացի:

Քաղկի դումէն, դումի մաախարա գլասնիքը փիքր ին արի, փիքր ին արի ու միրջը էն ին փիքր արի, վուր թէ վուր չլէնները փայտօնի փուղը կու աւելացնին՝ հարիր հարիր թուման կու շինին, էն չախը գորոդի բանը խիստ լաւ կուլի՝ հացը կու էժանանայ, միսը մուքթայ քու դառնայ, օրիրը կու տաքնան, ու էլ խալխը չի մեռնի՝ չունքի չլէնները փայտոններով բայթա կուտան:

Ու վուր ուփրօ լաւ բլի, էն էլ ին փիքր արի վո՛ւր՝ ուփրօ լաւ կուլի կօսէ վուր, ծառայողներու ջամագրները քչացնինք, չունքի, թէկի միսը, նուսթը, փէտը, հացը, օթախները կու էժանանան, էլ ինչ կօնին վուր ծառայուղնիրը լաւ լաւ ջամագրներ միկալնին:

Ես էս բաներուն զարուլ իմ. զարբաթը լաւ բան է. ու չունքի գիդիմ վուր, ուպրուի չլէնները էն դդում ունին մամա պապէրիցը ու սրբիչ բաներիցը դախուղ, վուր կռնան էտ փաղով էլ եօլա գնա. մաշ հրամանք իմ անում, վուր իրենք էլ ջամագրնիրը՝ չուրս չուրս հարիր թումաններ—վուր առնում ին՝ չառնան:

Թող էտ փուղերը հաւաքին գորոդի կասումը, էդերա փուտաճանապարհներու մէջ ածած փուղերն էլա դուս բերին:

Դ. Պալատացեան.

# ՃԱԲԹԻ-ՃԱԲԱԹ

III

Ես սիրում եմ մեր մամուլը. սիրում եմ ոչ թէ նրա համար, որ նրանից խելք, գիտութիւն, շնորհալութիւն և նոյն իսկ կեանքի փաստերի գիտողութիւն եմ տեսնում, այլ նրա համար, որ նրանով զւարճանում եմ, զւարճանում ճիշտ այնպէս, ինչպէս զւարճանում է մի բամբասասէր այրին, որին պատմում են նրա մերձաւորի մասին զանազան «մերկացնող» չչուկներ, լուրեր, ենթադրութիւններ:

Եւ ճիշտ որ. երբ յոգնած օրւայ աշխատանքից տուն էք գալիս և ոչ երաժիշտ էք, ոչ թղթամոլ, ոչ գինեմոլ, ոչ կնամոլ, ոչ ֆրամոլ և ցանկանում էք փոքր ինչ հանգստացնել ձեր նեարդերը, դրա համար խորհուրդ կը տամ երբեմն (միայն երբեմն) առնել ձեռքներից հայ թերթեր և... կարդալ:

Եւ ես հաւատացնում եմ, դուք կը հանգստանաք բամբասանքի, մանր և կեղտոտ ինտրիգների այն ցանցի մէջ, որ կառաջարկէ ձեզ հայ թերթը. դուք կը տեսնէք թէ ինչպէս «ազգի փրկիչները» թերթի էջերը լւացարան դարձրած, որի վրայ լւանում, ճմռում, մզում են իրենց անձնական հակառակորդների կեղտոտ լաթերն ու...

Եւ լսում էք դուք հայկական զւարճութեամբ, եթէ կուզէք, ողբերգութեամբ... Այստեղ ձեր աչքի առաջ լւացւում են մեր մէկ և կէս գրոշին հասարակական «գործիչ»-ների կեղտոտւած սպիտակեղէնները. մերթ Թագէոսինը, մերթ Առաքելինը, մերթ Ալեքսանդրինը, մերթ Սամսոնինը, Գարեգնին, Սարգիսին, Կիրակոսին, Կարապետին, Ստեփանոսին և այլն և այլն. մինչ ճերմակ վրան, մինչ ճերմ- պերմ—մինչ կեղտոտ շորեր, լաթեր... Եւ այսպէս երեկ, այսօր, վաղը, այժմ և մինչ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ահա օրինակ: Առջևս դրած է «Փորձ»-ի № 5-ը, դա պատահական է, այն «Փորձ»-ի, որը նոյն իսկ պ. Լէօյի «ընծայումն իսատճարից» յետոյ շարունակեց լւացարանի դաշտ մնալ: Եւ ահա այդ «Փորձ»-ի այդ №-ում կարդում եմ Մ. Ց. ստորագրութիւն կրող «Տարեմուտի խոհերը» և այն էլ առաջից—Սան-Ռէմոյից: Նու, ինչ ինչ, բայց կարելի էր ենթադրել, որ գոնէ Սան-Ռէմօում նստած պարոնը կը գրադէր աւելի բարձր և մաքուր խոհերով, բայց արի ու տես, որ հայը նոյն իսկ այդ տեղից շարունակում է լւացքը. և լւանում են ում լաթերը՝ նոյն Հ. Առաքելեանի, նոյն Տ. Նազարեանի, նոյն Թաայեանի, նոյն և նոյն անձանց, որոնց լաթերը փոխադարձաբար լւացել են եօթ ութ տարի շարունակ մեր մամուլում... միանման գիտակցութիւններից առաջ-

## ԽՂՃՏ ԳՈՐԾ

—Ուստայ Մարգար, գործերս թարս գընաց, պարապ մնացի. ինչ գործի ձեռք զարկեցի, զարար էրի, խեղճիմ իրատ տուր, գործի մ գլխ ինձի:

—«Սանահար ջան, թէ կը բաշարես, օգուտով գործ շատ կայ, արի ինձի յակմաջ էրէ ալ տա, տար Կողբ ծախէ: Բամբակ առ, տար Երևանու Զանգ առ, տար Սևան: Տանձ առ, տար Թրթդ: Փուրչուլաւկ առ, տար Գիւմրի: Նուշ առ, տար Բագու: Էշ առ, տար Ղարաբաղ: Թուրմայ առ, տար Բաղդադ: Տանձ առ, տար Վան: Աս գործերից վերը էնէս, մէկին տար կոշխատես: Դէ գնա, էլ մի կայնիր, գործը բաղլայիր ու ջրինիր:

Ղ. Մաքսար

---

## ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ

Սևաւորեանց Սարգիսը կարմրած աչքերով, անհուն թախիծը դէմքին, մի անկիւն թմրած՝ կանգնել էր դասի առաջ և անգիտակցաբար, ձեռքը շարունակ առաջ էր մեկնում, սեղմում ինչոր ձեռներ, ինչոր մարդիկ նրա ընդունում, ինքն էլ չիմանալով թէ ով է մանողը ու բոլորովին չը հասկանալով թէ այն ինչ հանդիսաւոր, հատաչող ձայներ են, որ եկողներն են հանում:

Նրա կինը, Մարիամը, նոյնպէս տխուր է, աչքերը ուռած, ինքը գունաթափ. և ծանրօրէն յաճախ օրօրւում է աջ ու ձախ, «ախ» անում, հառաչում, և տանից հեծկլտալու՝ արտասուքը երեսից շուտացնում: Նրանց երկու երեխաներն էլ. 15—18 տարեկան իրենց ծնողների պէս տխուր են, և տանից դադարելու, մի գլուխ լաց են լինում, չը նայելով որ բազմաթիւ նրա եկողները խրատում են, որ չպէտք—է լալ: Աստծու գործն է, և այլն:

Եւ իսկապէս Աստծու գործն էր: Այո, Գրիգորը տան սիւնն էր, ծնողների միակ նեցուկը, որ նրանց պահում պահպանում էր ծերութեան հասակում. տուն էր շինել, տուն դրել, եղբայրներին ուսում տալիս, նոր նոր սկսել էին կանոնաւոր ապրել. բայց ով ինչ կարող է անել. Աստծու կամքն էր. ամա ու տարաւ. ծով գանգատներ: Մեռնողը մեռաւ. հարկաւոր էր կենդանի մնացածների մասին մտածել: Եւ Սարգիս Սևաւորեանցը որքան էլ սևաւոր լինէր, այնուամենայնիւ պարտաւոր էր կենդանի մնացածների մասին մտածելու: Այդ էր պատճառը, որ պատարագից յետոյ, ժամաւորները հոծ բազմութեամբ, մեռելատան էին գալիս՝ հանգուցեալի ծնողներին սփոփանք բերելու, և նրանց անփոխարինելի կորստի փշատակը յարգելու, վերջին հրաժեշտը տալու համար:

Տան բարեկամները ոչինչ չէին խնայել. ծնողների վշտարեկ լինելու պատճառով յուղարկաւորներին պատւելու ծանրութիւնն իրենց վրայ էին վերցրել, և բարեխղճութեամբ կատարել էին իրենց գործը: Սեղանը իր ամբողջ երկայնութեամբ բացւած՝ բեռնաւորւած էր օրէնքի համաձայն. գինի, ձուկ, կանաչեղէն, տապակած հաւեր ու բազեր կային առատօրէն. մի խօսքով պատրաստւած էր այն ամենը, ինչ որ հարկաւոր էր ամենասիրելեայ ննջեցեալի հոգին հանգստացնելու համար:

Մխիթարիչները եկան, մտան սեղանատուն, և սեղմ շարքերով՝ նստեցին իրար կողքի:

Նրանցից մէկն սուս Սևաւորեանցի ձեռքըն ու իր մօտ բաշեց. Սևաւորեանցը նրանից ինչպէս չիմանալով, թէ որտեղ է գնում, ինչ է անում: Գիտէր միայն, որ իր որդին չկայ, և այդ մարդիկը նրա համար են հաւաքել, որովհետև իր որդին չկայ:

Վերջապէս եկաւ և Տէր հայրը՝ իր երկու տիրացուներով, սեղանի վերևին կողմում նրանց տեղ տւին: Տէր հայրը թախծամած դէմքով իր տեղը գրաւեց, մի խոր արտախորով հառաչանք արձակեց, քննական հայացք գցեց շուրս կողմն ու սեղաննեով, որ համարակութիւնն իրեն է սպասում, վշտալից ձայնով, բառ առ բառ պատշաճի մի քանի խօսք ասաց, ապա հացն օրհնեց, ու անձնական օրհնակով նշան տւաւ հանգուցեալի յիշատակն օրհնելու: Ամեն կողմերից ձեռներ մեկնւեցան դէպի շիշերը. բաժակները լցւեցան, Տէր հայրը վերցրեց իր բաժակը:

—Աստւած մխիթարեսցէ զքեզ, Սարգիս. դարձաւ նա Սևաւորեանին, բեկ-բեկ ձայնով. անհուն թախծի անկեղծ շեշտով.— Սուրբ հոգու կարողութեամբ լցւի քո սիրտը, որպէսզի կարողանաս քո ծանր ցաւից գիմանալ, որդիս: Ծանր է, ծանր քո դրութիւնդ. հայր որքան ծանր է խա… քանի՜ քանի ծագիկ հասակներ, յուսատու յոյսեր եմ հողում ամփոփել. չեմ կարող չանել. ի պաշտանէ՝ պարտաւորւած եմ: Բայց պէտք է լինի սիրտը, որ կարողանայ քահանայի տեսած ցաւերին դիմանալու… Դու մի որդի յանձնեցիր հողին. իսկ ես… չէ՞ որ բոլորն իմ հոգևոր որդիներս են… եթէ ես համբերում եմ, դու էլ համբերիր, որդիս: Տէր, ընդունիր Քո ծառային, և բազմեցո ի շարս արդարոց: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Վերջացրեց տէր-հայր, բաժակը պարպեց, ու դարձաւ տիրացուին:

—Էն հաւը դէս գիր, որդիս:

Սեղանակիցներից իւրաքանչիւր իր «ողորմաթասը» բարձրացրեց, հանգուցեալին գովեց, ծնողներին մխիթարեց, ու խոր հառաչանքով խմեց: Եթէ յարգել՝ ապա պէտք էր յարգել արժանավայել կերպով… «ողորմաթասերն» արագացան, սեղանը կամաց-կամաց թեթևանում էր իր բեռներից, իսկ մխիթարող եկողների գլուխ

---

նուիրւած. ոչ «Գործն է» բացառութիւն, ոչ նրա № 5, ոչ «Մշակ», «Լուսաբեր», «Մեր «Ձայնը», «Հովիւը», «Հայրենիքըն» ու «Ջանքը» և այլն և այլն. Մխեմայն է:

Բաւական է որ հայը ձեռքը գրիչ առնի և մտածի գրել հայ թերթում. և ահա նրա թանաքի միջից գրչի ծայրից ինկոյն դուրս կը թռչեն Համբարձումն ու Եղիշէն, Աւետիսն ու Ալեքսանդրը, Կարապետն ու Գաբրիէլը, Սեդրակն ու Տիգրանը, Աստղիկն ու Լևոնը: Եւ նշանաւորն այն է, որ մի յօդւած միայն այն ժամանակ է հիւթալից, բովանդակալից, հետաքրքիր համարւում, երբ… լցւում են ահա գրանց յաթերն ու ազխատկեղէնները:

—Կարդացի՞ք այսօրւայ այս ինչ №-ը— հարցնում է հայը աչքերն ու բերանը ապերուրթեան կրակով լի:

—Ոչ, ինչ կայ որ:

—Կարդա, անպատճառ կարդա, Լէօն լաւ լացել է Համբարձումին, Համբարձումը Եղիշէին, Եղիշէն Ալեքսանդրին, Թադէոսը Սարգսին, Աւետիս Աշոտին, Արտաշէսը Գաբրիէլին և այլն և այլն:

Եւ ահա լրագրի այդ համարը ձեռքից ձեռք է անցնում…

—Լաւ, շատ լաւ են լացել… և սպասում են հետևեալ համարին, որ կարդան, թէ ինչպէս, այսօր արդէն ուրիշ լրագրանում, այս անգամ արդէն ուրիշ լրագրողները կը լաճան երեկւայ իրենց լացողներին…

Երբ մեզնում ասում են՝ թէ այս ինչ թերթը անհետաքրքիր է կազմւած, այդ նշանակում է որ այնտեղ լացք չկայ… Եւ բաւական է, որ մի թերթ, մի շաբաթ շարունակի լացք չանել և… նա կը մեռնի անխուսափելիօրէն…

Ահա հէնց դրա համար էլ, ընթերցող. և ես և դու և մենք բոլորս սիրում ենք կարդալ հայ թերթեր… և սիրում ենք բամբասանէր կնոջ սիրով…

Բայց ժամանակ է, վերջապէս, գոնէ այս տարի, գոնէ մի տարի փորձել ու փոխել լրագրարարները, նու գոնէ… լաթերը:

Եթէ չենք կարող տանից լացքի բաւակականութեան ազրել, նու черть побери, լանանք այս տարի նոր լաթեր, ուրիշ մարդկանց…

Եթէ ոչ, Աստւած վկայ, ձանձրալի է միշտ նոյնը և նոյնը…

Սա իմ բարեմաղթութիւնն է:

Եւ ես, որպէս այս առաջարկն անող և որպէս իսկական հայ գրող, վճռել եմ խմճնարթէ-շարաթում» լանալ մեր զատարի լաթերը, միայն մաքուր ջրում. և լանալ մի անգամ: Փորձենք նոյն իսկ անհետաքրքիր լինելու գնով…

Սասու-Նէ

ները՝ ծանրանում էր։ Նրանց հանդիսաւորութիւնը հետզհետէ նւազում էր, թանկագին կորուստի մասին խօսակցութիւնը մանաւանդ, և դէմքերին դրոշմւած անկեղծ կրակծի արտայայտութիւնը վերանում։

—Ամմա ինչ լաւ սեղան են սարքել,—փսփսաց տիրացուն՝ ընկերոջ ականջին։

—Լավւոն ասնի,—փսփսաց միւս տիրացուն, հաւի բուդը բերանը խոթելով,—Աստւած ողորմի հանգուցեալին։

—Որդի, էն շէշը դէս գիր,—ասաց տէր հայրը, որի ճակատի կնճիռները անցել էին ամել թեթև կարմրոցի, և գինու բաժակը վերցնելուց՝ էլ չէր կանչում—«Աստւած ողորմեսցէ». այլ՝ խաչակնքում էր գինին, «Հեյլէ պղծութիւն, ինչէ սրբութիւն» ասում ու բաժակը վերցնում։

Այժմ նա ամէլի շատ շատ էր կրկնում,

—էն՛ ձուկը դէս գիր, որդիս,—էն խորովածը դէս գիր, որդիս։ Եւ բազմութիւնը նրա օրինակին էր հետեւում, հանգուցեալի հոգու հանգստեան համար։

Հանգուցեալի բոլոր բարեկամութիւնները յիշելով, այժմ փոխել էին նիւթը. հաւերի լաւ տապակւած լինելը, ինկրայի թարմութիւնը, գինու արտօրմաձնութիւնը, ձկան տասնելութիւնը, և այլն՝ առատ նիւթ էին ներկայացնում խօսելու։

—Հրաշալի գինի է,—ասում էր մէկը։

—Այո, հիանալի է,—պատասխանում էր հարեւանը.—ես մէկ էլ այս տեսակ գինի մի ամիս առաջ Սահակենց տանն եմ խմել, երբ նրա աղջիկն էր փախճանելը։

—Ո՞վ է էսքան չնորհքով պատրաստել էս ձուկը,—հարցնում էր միւսը։

Մի ուրիշն էլ Սեւուրեանին բոլորովին մխիթարած լինելու համար, կանչեց.

—Սարգիս, ինկրի գլուխդ էն, քանի էր առել... տօ, անաչէն, ինչ ես ունքերդ կախ գցել. ադամարդ չէս. սիրտդ պինդ պահիր, կեր, խմիր, քէֆ արա. դու չես մեռնելու։

Բայց Սեւուրեանը ոչինչ չէր լսում. ինչպէս նստել էր, էնպէս էլ կար։ Ոչինչ չէր զգում, ոչինչ չէր իմանում. նա մոռացել էր դէպի բոլորը, ինչ որ իր շուրջն էր կատարւում. վշտի ծովի մէջ ընկղմւած՝ իր գոյութեան մասին անգիտութիւն չունէր։

Այդ էր պատճառը, որ նա բոլորովին չհասկացաւ, թէ ինչպէս բազմութիւնը իր գործը վերջացրած, կարմրած թշերով, շաղւած աչքերով հերթով իր ձեռքը սեղմեցին, և ինչ-որ խօսքեր ասելով, իրար յետեւից դուրս եկան։ Նա միայն այն ժամանակ շարժւեց, երբ մէկը ձեռքը դրաւ ուսին, օրօրեց ու ասաց.

—Աստւած քո հոգին լցնէ մխիթարութեամբ, որդիս։

Թւանում էր, որ նորից վշտացած դէմքով, զղջացող ձայնով, ինչպէս արթուն հոգին՝ իր գերն էր կատարում, իր հաւին ափոփում։

Բոլորը գնացել են, որդիս,—ասաց տէր-հայրը, տեսնելով, որ Սեւուրեանը չլսեց իրեն—բոլորը գնացել են. ասացի Յամ, մի անգամ էլ քեզ մխիթարեմ, որդիս։

Սարգիսը դարձեալ ոչինչ չպատասխանեց. Տէր-հայրը բռնեց նրա ուսից, մի քիչ ուժեղ կերպով ցնցեց և ասաց, ձայնը բարձրացնելով։

—Ես որդուդ վերջին հրաժեշտն եմ տալիս, և երկնային տէր-թագաւորից նրա հոգու փրկութիւնը խնդրում... տիրացուներին չմոռանաս, օրհնեալ լինիս. նրանց քրտինքի վարձը թողնել չի լինի, որդիս։

Սեւուրեանն այժմ բնազդմամբ հասկացաւ, որ քրտինքի վարձ պէտք է տալ, որ տէր-հօրը վերջին հրաժեշտից յետոյ՝ դատարկաձեռն բաց թողնել չի կարելի, և ձեռքը գրպանը տարաւ.

—Աջ տեսան ի վերայ տանս այս եղիցի, որդեակ, և գրպան քո ոչ դատարկեսցի ի փառս աստուծոյ,—ասաց տէր-հայրը, յագեցւած աչքերը երկինք բարձրացրեց, ու խոր հառաչանք արձակելով՝ փողը գրպանը դրաւ և դէպի դուռն ուղեւորւեց։

Սեւուրեանը դարձեալ անզգայ էր. նա միայն մի քանի շաբաթ յետոյ ուշաբերւեց և նոր զգաց, թէ իր որդու յիշատակը յարգող, վերջին հրաժեշտը ասողներն, ինչպէս են անզգամաբար կերպով իր տունը քանդել։

Գասպար

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յայտնում ենք ի գիտութիւն մեր բաժանորդների, որ «Գիւղատնտես» շաբաթաթերթի № 1-ը լոյս կը տեսնի յունվարի 25-ին, այնուհետեւ իւրաքանչիւր շաբաթ կանոնաւորապէս։

Խմբագրութիւն «Գիւղատնտեսի»

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ի գիտութիւն այն բոլոր անձանց, հաստատութիւնների, գինետնական խումբերի, ակումբների, գիւղական հաստատութիւնների եւ յատուկ դպրոցների, «Խաթաբալայի» գրասենեակը այսու պատիւ ունի յայտնել, որ անհնար է ձրի թերթ ուղարկել։

Գրասենեակը իր կողմից ուղարկում է մի քանի տասնեակ տեղեր՝ բանտեր, դպրոցներ եւ ընթերցարաններ. աւելին մենք չենք կարող. դա մեր ուժերից վեր է. Աւելի հեշտ է մի քանի մանէթ հաւաքել եւ ուղարկել թերթի համար. քանի որ այդ կարող է անել մի խմբագրութիւն.

## ՓՈՍՏԱՐԿՂ

Նախաւանի Աւագ ուսուցչին.—Ի պատասխան Ձեր նամակի մենք էլ խնդրում ենք Ձեզանից բարի լինել տեղայդ տէր-հօրից խնդրել հասցնել գրասենեակին իր պարտքը և հին բաժանորդագինը, որը խոստացաւ ուղարկել և վերջն էլ անպատասխան թողեց։ Հակառակ դէպքում մենք ստիպւած կը լինենք նրա արդիւնքը «ի կատարս» մեր գրաւել և գործն էլ կուսակցութեան դատարանին յանձնել։

Իսկ ձեզանից գրական պատասխան առանք. կը կատարենք ձեր խնդիրը և թերթը ձեզ կուղարկենք։

Թիֆլիս. Մարկոս Վարդանեան Թաթարեանին,—Որովհետև դուք ինչպէս ասում էք «Յազի սխալ էր նշանակել ծագումի նման թռչել ազատ ենթերում» ուստի խորհուրդ ենք տալիս թռչել, թռչել, և միշտ թռչել, քանի դեռ անպիտան որսորդները հրացանի փողը չեն ուղղել դէպի ձեզ, իսկ ինչ կը վերաբերի ասելուն՝ դա ապագայի գործ է։


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաժանորդագրութեան համար բացւած «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի գրասենեակը

**ԳՏՆՒՈՒՄ Է**

Դվորցովայա փողոց, ՎԻԿՏՕՐԻԱ հիւրանոցի գաւթում, Եփրեմ Ծատուրեանի դէպօյի կող.

Բաց է առաւօտ 9—2

Երեկ. 6—8

Հին №№ ցանկացողները դիմում են նոյն տեղը։

Ցրիչների համար մուտքը ազատ է

**ԾԱՔԱՐ ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ**

**ՎԱՐՍԱ-ՎՐԱՏՈՒՆԸ**

(Парикмахерская)

Գտնւում է Գօլովինսկի պրօսպ. տուն Միրզոյեւի, Արքունի թատրոնի եւ կրպոսի դիմաց.

Երես ածիլելը, խուզելը և մազերը փարտւելը կատարւում է խիստ արագ և մաքուր։

Գները խիստ չափաւոր

**ԿՕՇԿԱԿԱՐԻ ԽԱՆՈՒԹ**

Ս. Մ. ՂԱԼԱՄՔԱՐԵԱՆԻ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ. հասցէն Дворцовая ул. д. Грузинск. Дворянства




# ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# 1909 Թ.

# 4 Տ. „ԽԱԹԱԲԱԼԱ" 4 Տ.

## ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՍԱՏԻՐԱԿԱՆ
## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունաւոր պատկերազարդ հայ շաբաթաթերթն է.
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական և եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է 12—16 երես, որտեղ կը մտնին բացի սովորական չորս երես կարիկատուրաներից այլև մեր, և՛ հարեւանների կեանքից, դէպքերից և անձնաւորութիւնների պասկվիլներ, նկարներ և տեսարաններ.




## ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

ՆԿԱՐԻՉՆԵՐ՝ Գ. Բաշինջաղեան, Գ. Գրինեւսկի, Գ. Երիցեան, Ա. Միրզոյեան, Օ. Շմերլինգ, Գ. Ռոտտեր եւ ուրիշներ

## ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ

Աթանասեան Ա. (Ստորակէտ, Նս-Ջեմ), Աստուածոնի, Աղայեան Ղ., Բալուղեան Ջաւադ բէգ (Սեան-Նախշի), Բագրատունի (Փալանդուզ Մկօ), Գեօզալ Աղաբաշի, Գրիչ, Բազէն, Երիցեան Աստ. (Գ. Կալատուզեան, Բիօ-Գրաֆ), Զեփ, Լէօնիդ, Խենթ, Կրէտ, Կայծակ, Հաշ., Հայկազունի (Նէմօ-Լիբէնդի), Մելիք Շահնազարեան (Տմբլաշի Խաչան), Մատադոր, Տէր Մելիքսեդեկեան Ս. (Ղալայչի Մարգար) Բէալէրտիօր, Սատիր, Օշխար, Փինալ եւ ուրիշներ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ՈՒՄ կը տպագրուեն ռուս և օտար երգիծաբան ֆէլէտոնիստների լաւագոյն երգիծաբանական գրուածներ, որոնց շարքերի մասին այլև Ստորակէտի «Շաբթէ-Շաբաթ» ֆէլէտոնները.

Մենք ունենք սեփական թղթակիցներ Կովկասի, Ռուսաստանի եւ Անդրկովկասեան երկրի բոլոր կողմերում եւ հայաշատ վայրերում այլեւ արտասահմանում՝ Կ. Պօլսում, Բերլինում, Վանում, Թաւրիզում եւ Էրզրումում.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԹԵՐԹԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԴՐՈՒԵԼՈՒ ՕՐԻՑ

# ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

| ԹԻՖԼԻԶՈՒՄ | | ՈՒՐԻՇ ՏԵՂԵՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ. | |
|---|---|---|---|
| Տարեկան | 4 ր. | Տարեկան | 5 ր. |
| Կէս տարուանը | 2 ր. 50կ. | Կէս տարուանը | 3 ր. |
| Երեք ամսուանը | 1 ր. 25կ. | Երեք ամսուանը | 1 ր 60կ. |

ՀԱՍՑԷՆ՝ Тифлисъ, Редакція „Хатабала"
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ՝ Tiflis (Caucase) Re'daction „Chathabala".

Հեռագրի համար՝ Тифлисъ «Хатабала»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

Мебельный магазинъ

## Бр. ГАЛУМОВЫХЪ,

*Мадатовская ул., противъ Александровского сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англiйскихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англiйскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо" модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнсой.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемiрно известныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, специально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШIЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библiотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**




Ո՞րտեղ տաքուկ ու մենիկ է.
—Վերտալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ սարքածները ձրի է.
—«Վերտալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ անպարտաւ մաքրութիւն է.
—«Վերտալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ լիակատար հանգիստ կճարէք.
—«Վերտալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ համեմատաբար էժան է.
—«Վերտալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ կան ամեն յարմարութիւններ։
—«Վերտալ» հիւրանոցում։
Իսկ ո՞րտեղ է «Վերտալ» հիւրանոցը։
—Ամենն էլ գիտեն. Եր. Վարանցովի արձանի մոտ. Հեռախօս № 418

## ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ
## ЖИВОПИСЦЕВА въ г. Орлѣ.



ԽՈՂՆԻ ՀՈՒԹՈՒԿ. Դետրիտի ուտելը 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.: Մի բուրլաց պահած՝—չէ փտնուում: Մանապարհածախսի համար—30 կոպ.: Երեք բուրլաց աւելի ուղղին ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԵՂՉ մինչև 20 տոկոս: Հասցէն Օրեոլ քաղաք, Ծաղկի հորթաւի Ժիվոպիսցևի.

# ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1909 Թ.

## ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ

XXVII տարի XX

Աղբիւրի տարեկանգինը 3 р. (արտասահման 5 р.)
Տարազի » » 6 р. ( 10р.)
Աղբիւր, Տարազ պրէմիաներով, Աստղապահով, Դեղափնջիկով 10 р. արտասահման 10 р.։
Тифлисъ, редакцiя АГБЮРЪ ТАРАЗЪ.
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

1909 Թ.

## „ՀՐԱԶԴԱՆ"

Գրական, հասարակական, տնտեսական օրաթերթի
Որը լոյս է տեսնելու առայժմ շաբաթը երկու անգամ հինգշաբթի և կիրակի օրերը։
Երևան և Ռուսաստան 3 р. Պարսկաստան 5 р. Տաճկաստան 60 ղրշ. Եւրոպա և այլ տեղեր 15 ֆր.։
Հասցէն՝—Эривань, Редакцiя „Разданъ"

1909

## ՄԵՐ ՁԱՅՆԸ

Հասարակական, գրական եւ քաղաքական օրաթերթի
«ՄԵՐ ՁԱՅՆԸ» կը հրատարակւի սահմանայ 1909 թ. նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով. լոյս կտեսնի շաբաթական երեք անգամ.—չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
«ՄԵՐ ՁԱՅՆԻ» տարեկան բաժնեգինն է.—Արտասահման 10 ռուբլի, Նոր-Նախիջևան և Ռոստով Դոնի տփին 5 р., գաւառ, ամեն տեղ 6 р.։ Կէս տարուանը ամեն տեղ 3 р., երեք ամսուանը 1 р. 50 կ.։
Դիմել՝ Нахичевань на Дону. Редакцiя „Меръ Дзайнъ". Կամ՝ Nacithevan s-Don, Russie. Rédaction „Mer Dzain".

## ՆՈՐ ԴՊՐՈՑ

ԱՄՍԱԳԻՐ

(Երկրորդ տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ Է

Ուսուցչական միութ. անդամների համար տարեկ 3 р. կէս տար. 2 р. ոչ անդամների համար 5 р. կէս տ. 3 р.։
Հասցէն՝ Тифлисъ. Редакцiя журнала «НОРЪ ДПРОЦЪ»

Открыта Подписка
на 1909 годъ

на ежедневную литературную, политическую и общественную газету

## БАКУ

ПОДПИСНАЯ ЦѢНА:
Съ доставкой въ Баку: на годъ—7 р.
Адресъ Баку, Редакцiя „БАКУ"

## „ՃԱՅՌ"

գրական, հասարակական և քաղաքական թերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Ռուսաստան տար. 3 р. Արտասահման 4 р.
Հասցէն՝ Александрополь Редакцiя Жайръ.

ԽԱԹԱԲԱԼԱ-ի

Կոմպլեկտներ փառանել կազմած

| | |
|---|---|
| 1906 թւի արժէ | 5 р. |
| 1907 թւի | 7 р. |
| 1908 թւի | 7 р. |

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 р. որոնց կուղարկենք վերադիր վճարով։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԱՐՏՕՆԻԱԾ



Ամենալաւը Աշխարհում

Ամենատաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆԴԱՅՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻՉԱՆՕ-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ
ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Ի Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ




1888

ԵՂԲ. ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ ՑԻՐԿ




ժամանեց աշխարհահռչակ և անյաղթելի

ՀԱՅ ԸՄԲԻՇ
ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉԵԱՆ
ԲԱՐԱՏԱՆԵԱՆՑԸ
(Բեսարաբցի)

Որը մասնակցել է համաշխարհային ըմբշամարտերում Բերլին, Պրագա, Լօնդոն, Պարիզ և ուրիշ քաղաքներ։

ԳՕՏԵՄԱՐՏԻ ԵՒ ՈՅԺԻ համար ստացել է ոսկեայ մեդալներ և պատուաւոր մրցանակներ։

ԵՂԲ. ՍԱՖԱՐԵԱՆՑՆԵՐԻ
ԵՒ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ

Պատրաստի Հագուստների

«ՊԱՐԻԺՍԿԻ ՄԱԳԱԶԻՆ»

Ց Ի Ր Մ Ա Ն

Յունուարի 12-ից նշանակւած է

ԱՀԱԳԻՆ ԶԵՂՋՈՎ

ՄԵԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Բոլոր ապրանքների, այսինքն՝ տղամարդկանց (զինւորական և քաղաքացի), կանանց և երեխաների հագուստների և բոլոր դերձակական ապրանքների։

Գօլովինսկիյ պրօսպ., Բաշւէթի ս. Գէորգ եկեղեցու տանը. հեռախօս № 258։


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

# ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԸ




*Սպասիր, ով ս ո վ. մի կոտորիր ոչոքի, մինչև հայ հարուստը մտածի քաղցածին օգնութեան գալ։*

## ՈՐԴԻՔ ԵՒ ԾՆՈՂՆԵՐ




—Որդիս, եկել եմ քեզ շնորհաւորելու, իմացել եմ քաղաքում պսակուել ես.

—Հայրը, խնդրում եմ տուն չգաս, ամօթ է իմանան՝ թէ ես քո որդին եմ.

—Էտ ղժրթ ես ասում.

—Հայրը, ի՞նչ անեմ. այստեղ այսպիսի սովորութիւն է։

—Աղջի, շատ տուն ու դուռ մի անի, գնա կուխնումը նստի, թէ չէ փեսան կը տեսնի, կը նեղանայ։

—Ախր որ, բա ձեզ որ տեսնոմա խի չի նեղանոմ. բա ես էլ քու ծնողը չեմ։

-Դէ ի՞նչ անենք փեսան կրթուած է։